

ՄԵԾ ԵՂԵՆՔԵՆ 93 ՏԱՐԻՆԵՐ ԵՏՔ

Մեծ Եղեռնի 93 տարիներ ետք վերապրող եւ գոյատևող հայությունը ոչ միայն կու տայ փաստը նահատակներու կտակին հանդէպ հաւատարմութեան, այլեւ՝ անկախ պետականութեան մը կատարելի վրայ խարսխուած հայրենիքի մը տէրը կը մնայ: Այդ խարսխիւք իր ամբողջութիւնը կորսնցնելու չէ ներքաղաքական ցլնցումներով, ինչ որ կը կազմէ պետական շրջանակներուն պատասխանատուութիւնը, մնալու համար կրունը ամբողջական Հայաստանի երազին իրականացնելու...: Ամբողջական եւ միացեալ Հայաստանը կը մնայ Հայաստանի եւ Սփիոքի հայութեան ազգային երազը՝ հողային պահանջատիրութեան անխախտ եւ անժամանցելի ուխտով...:

Արդի Հայաստանը նուաճուած յաղթանակ մըն է Թուրքիոյ կողմէ գործարարուած ցեղասպանութենէն ետք եւ կը շարունակէ մնալ աչքին փուշը արդի Թուրքիոյ համա-պետական քաղաքականութեան, որ հրաժարած չէ Հայաստանը ջնջուած տեսնելու բանօրոքիստական վաղեմի ծրագրէն:

Նուաճուած յաղթանակը համահայկական ազատագրական պայքարով (Սարդարապատ) հայ ժողովուրդի հաւաքական եւ միասնական կամքին պակասում էր: Արեւմտեան Հայաստանի յափշտակուելէն ետք Արեւելեան Հայաստանն ալ զայնքով ցեղասպանութիւնը շարունակելու ձախողութիւնը եղաւ Թուրքիոյ պարտութիւնը Սարդարապատի հերոսամարտով, որ թրքական բանակը՝ երկարած դունչը, բեռացնելով Հայաստանի հողերէն ծնունդ առաւ Ա. հանրապետութիւնը 1918-ին: Ի՛նչ կրնար ըլլար ճակատագիրը հայութեան, եթէ եղեռնէն առաջ գերիշխող ըլլար Սարդարապատեան միասնական ոգին եւ հաւաքական կամքը...: Ահա թէ ինչո՞ւ միասնականութիւնը այն ուժական գործօնն է, որ Մեծ Եղեռնէն 93 տարիներ ետք կը մնայ կիզակէտը հայ քաղաքական միտքին, որ ունի դիմագրաւելիք բազմաթիւ մարտահրաւերներ հայրենիքի ա-

պահովութեան, ցեղասպանութեան միջազգային ճանաչման առընթեր հողային հատուցման եւ այդ գծով պահանջատիրութեան պայքարի ճամբուն վրայ...: Ցեղասպանութեան ճանաչումը իր հերթին, որ արդիւնաւոր ճանապարհ մը արդէն անցած է յոյսի դրական հորիզոններ բաց պահելով տակաին, սակայն հողային հատուցման իրաւունքն ալ մոռացութեան տրուելու չէ...: Ցեղասպանութեան ճանաչման հետ, հողային հատուցման իրաւունքն ալ միաժամանակ:

Հայրենի պետականութեան վերականգնումն ու անոր զարգացման հողովոյթը 1918-էն մինչեւ ներկայ օրերը, խորհրդայինէն անկախութեան անցում, հայ ժողովուրդի գոյութեան պայքարի գրասկանը ըլլալէ բացի, հայկական պահանջատիրութիւնը ուժաւորող գործօն է, նոյնիսկ եթէ քաղաքական պայմաններու եւ այլեայ պարագաներու բերումով պահանջատիրութիւնը իր քաղաքականութեան առաջնահերթութիւնը չէ դարձուցած...: Այնքան աւտեն որ Մեծ Եղեռնի Ծիծեռնակաբերդի սլացիկ սինդրոմ հայեացքները սեւեռուած կը մնան բռնագրաւուած Արարատի ուղղութեամբ եւ նահատակներուն անջէջ կրակը անմարտի կը բոցավառի եւ Սարդարապատի յուշահամալիրին զանգակները կը դողաճեն՝ հողային դատը կը մնայ հայ պետականութեան քաղաքական կտակը: Այդ կտակին նուիրականութիւնը ոչ միայն գունատելու չէ արդի ժամանակներու ապագային հովերու ազդեցութիւններէն եւ համաշխարհայնացումի այլասերիչ հոսանքներէն, այլ՝ սերունդէ-սերունդ պահելու է իր այժմէականութիւնն ու տեսլական հաւատքը: Առողջ մտաւեւումով ազգայնապաշտութիւնը, ազգային մշակութիւնը կրնա իրազեկուել զարգացող եւ ամրապնդող գիտակցութեամբ, նահանջելու չէ բարձրացող նոր սերունդներու հայեցիական հարազատութենէն եւ վաւերականութենէն...: Դուրսի խայծերը, որ հրապուրիչ են, խաբելու չեն արտահոսքի համար...: Հայաստանի ազգաբնակչութեան աճը եւ քանակական

բազմացումը կենսական նշանակութիւն ունին հայ ժողովուրդի իրաւունքներու ձեռք բերման համար, Հայաստանի առողջ կշռոյթով գոյատևման համար, Հայ Դատի համար, Արցախի ու Ջաւախքի համար...: Ահա թէ ինչու համար Մեծ Եղեռնէն 93 տարիներ ետք հայրենի պետականութեան համար առաջարկուած հիմնական խրճողիներ են, նախագահական ընտրութիւններէն շատ աւելի կենսականութեամբ, ժողովուրդին բարօրութիւնը ապահովող ընկերային եւ տնտեսական արդարութեան վրայ հիմնուած մարդկայնական բարեփոխումները, գործատեղիներու ստեղծման նախաձեռնութիւնները, տնտեսական, վարչապետութեան յատուկ, բեւեռացումները կանցնող քաղաքականութիւնը, ժողովուրդի աղքատացման պայմանները վերացնող միջոցառումները, երիտասարդները հողին կապող ասպարէզային հնարարութիւնները: Այլապէս ի՛նչ դատ, ի՛նչ ազգային հետաճկար...: Ծուկալական Հայաստանը կը խելոյէ մեծն անիրական երազ եւ սրբութիւն:

Հայութեան համար դարեր շարունակ սրբութիւն եղած է իր ազգային մշակոյթը: Մշակոյթը ազգային սրբութիւն պահող կառոյցներն ալ անտեսումի ենթակա կը մնան եւ գիտակցութիւնը կը նահանջէ ազգային արժէքներու հանդէպ անտարբերութեամբ: Ընդհանրական հայութեան համար, Սփիոք-Հայրենիք, մշակութային Հայաստանի մը վերածախլումը գոյապահպանումի կենսաւիշ է: Հայրենիքի մշակութային քաղաքականութիւնը, Հայ Դատի հետապնդելով, արժէքները արժէքները, ազգային արուեստներու, երաժշտութիւն, գրականութիւն, նկարչութիւն, թատրոն, շարժապատկեր, զարգացման հնարարութիւնները բարեկարգէ, նոր կարելութիւններ ստեղծէ, հորիզոններ բանայ, Հայկական Սփիոքն ալ ընդգրկելով իր մէջ: Հայկական Սփիոքը պահելու եւ պահպանելու համար ազգային մշակոյթի զարգացումը հիմնական ազդակ է:

Մեծ Եղեռնէն 93 տարիներ ետք Հայկական Սփիոքը ընդլայնելով աւելի լայն ծառայատեսակները հետաճկարային իմաստով Հայկական Դատը տկարացնող երեւոյթներ են ապագայնացման պատճառաբաններով: Կարելի չէ ուրանալ անշուշտ Հայկական Սփիոքի տարբեր կեդրոններու բերած նպաստը ցեղասպանութեան ճանաչման աշխատանքներուն մէջ: Բայց չմոռանալ այն իրողութիւնը, որ հայրենիքէն ամենհետացում, Միջին Արեւելքի հայահոծ շրջաններէն ամէն գողթ մեզ կը հետացնէ Արեւմտահայաստանի մերձարտութենէն, շլատելով մեր պայքարին ուժականութիւնը, տկարացնելով հողի ազատագրութեան յուշը...:

Ամէն հետացում օտարացում է նաեւ, որ ժամանակաւոր այլքներու փրփուրներով չի սթափիր...: Տարագիր հայութեան ինքնութեան հետ կը վտանգուի արտագաղթողներու ապագան:

Օտարացումն ու արտագաղթը Հայ Դատի թշնամիներ են, որոնք ցցուած են հայութեան առջեւ...: Այս թշնամիներուն դէմ պայքարիլը մեր ազգային քաղաքականութեան հիմնահարցն է:

Մեծ Եղեռնէն 93 տարիներ ետք եւ ընդհուպ 100-ամեակին, ժամանակը չէ՞ Հայ Դատի միասնական, համահայկական եւ կեդրոնական մարմնի կազմութեան, որ համախորհուրդ հայրենի պետականութեան հետ ճշդէ Հայ Դատին յատուկ ազգային քաղաքականութիւնը, համադրել ցեղասպանութեան ճանաչման արդիւնները եւ ուսումնասիրել այդ ուղղութեամբ ընթանալիք նոր ուղիները եւ այդ բոլորին վախճանակէտը հանդիսացող հողային հատուցման իրաւունքին հասնելու տեսլականը իրականացնէ...:

Այս կը պահանջէ ազգային հրամայականը...:

ՊԷՊՕ ՍԻՄՈՆԵԱՆ

19 Ապրիլ, 2008

ՆՈՐ ԵՐԿՈՒՆՔ

Գարնանային ապրիլը
Անձրեւեց արիւն վաղ առաւօտ,
Արձագանգ մնաց անզօր,
Անաղաղակ,
Իսկ ճիչերս որք՝
Մնացին խեղդուկ, անծանօթ...
Ոչ ոք լսեց
Իմ երեկի ցաւը խորունկ
Որ կը կոտոյայ
Այսօր Նաեւ...:
Ճակտիս՝
Յամբոյրի փոխան
Դրոշմեցին սուգ ու մուր՝
Ապրիլի խաւարով ներկուած:
Ազգ մը մեռաւ այդ օր,
Իմացա՞ք, մարդիկ,
Արեւածագէն առաջ
Բաց երկնքի տակ:
Բայց ինչու վիրաւոր հոգիս
Կը մսի տակաւին միայնակ
այսօր...
Չէ՞ որ մեռած եմ եւ վաղորդ...
Ու մոխրացած... փոշիացած...:
Անեացած...:
Ծանօթ չէ՞ք:

Տարիները չիմացան
Խռովքիս համը,
Ցերեկս վառեցաւ անբոց՝
Տառապանքես լուռ,
Կանչերս սեղմիւ
Երգեցին լոկ խաղաղութիւն
Արդարութիւն յուսալի
Եւ՝ կեանք Նաեւ,
Որ բացակայ մնաց
Օրացոյցիս թերթիկներէն
արիւնաթոյր

Տարիներ...
Տարիներ ընդերկար...:

Պահ մը, մոռցած որբութիւնս
տխուր,
Փնտռեցի գթառատ գի՛րկ
Երբ ազգ մը ամբողջ,
Մահաբունի մէջ երագեց անյոյս
Սպաննուած ցեղին
Ազատութիւնը միայն՝
Աղէկտուր կանչով:
Ի գուր լացի ու ողբացի իմ ցաւը
ընդմիջու...

Տառապանքս անհուն,
Ամէն օր մեծցաւ իմ հետ...
Տառապանքս խոլ
Դարձաւ ցաւ իմ մէջ
Ցաւ՝ բայց անանց
Ցաւ՝ բայց անդաւ
Որ աճեցաւ հոգւոյս մէջ բզբտուն
Եւ դարձաւ բա՛ռ, օրէ օր՝
Այրող զգացում
Կրէ՛ժ խօսուն ու կենդանի կանչ՝

Որ հակառակ կամքիս վիրաւոր
Կ'ուզէ թքնել
Ճակտագիր կոչուած
Բախտախաղին
Եւ աշխարհի արդէն մեռած՝
Արդէն ստաած խիղճին վրայ
անզոյ...:

Ես որոշած էի ապրիլ երեկ,
Նաեւ՝ շնչել...:
Նաեւ՝ ժպտիլ...:
Եւ վերջապէս ծիծաղիլ՝ գունէ՛
Կեանք կարծուած
Անգութ ու քմահաճ
Պատրանքին վրայ՝
Որ խլուեցաւ ինձմէ՛
Զեզմէ՛,
Մեզմէ՛... ազգ իմ,
Տարիներ երկար...:

Բայց, ես արդէն հեքիաթ մըն եմ,
Անհաւատալի եւ իրա՛ւ
Անիմանալի՞...
Գուցէ եւ ճիշդ է:
Սակայն՝ ներկայ՝ այսօր
Որ գիտցաւ վերադառնալ
Մահուան ճանապարհէն՝
Թաղելէ ետք
Մահն ու գերանդին
Իր սեփական նայուածքին տակ,
Իր մատներով վտիտ, տժգոյն,
Որպէսզի հեզնէմ
Մարդ կոչուող զազանը երեկի՝
Որ դիտեց թաղումս անտարբեր...
Որ հարսանիք սարքեց
Իմ արեամբ անխոն՝
Որպէս լուրջ գիւնի
Ըմպելէ ետք անհոգ գայն,
Որպէսզի յագեւար լրբութեամբ
Իր գիւնարբուցով երկար,
Չոհի սեղանին վրայ դրած
Իմ մարմինը արիւնաքամ...:

Ապրիլ...:
Դուն երկաթագիր գիրերով
Գրուած ես ճակտիս...
Եւ խորշմներուն մէջ խորունկ
անոր՝
Ապրած ու ննջած տարիներ
Յակառակ մերժումիս ու լացիս
Մեծ զարմանքով,
Կոտորացող վերքի ցասմամբ...:

Այսօր, տարօրինակ
Չորս դիս ունիմ դարձեալ

Հին դիմակներ երկներանգ...:
Աշխարհ ու մարդիկ
Որպէս թէ սթափած
Մահաբունէն երկար,
Հիմա յանկարծ կ'ուզեն յիշել ու
երգել

Տկար կանչով մը միայն
Կես համարձակ ու կես կատակ
Արդարութեան երգը ծանօթ
Ժանգոտած բերնով ծուռ ու մուռ
Սեւ երկնակամարի գործ ամպերն
ի վեր

Մոռացութեան գիրկը նետելով
Իմ երեկի խոցաւար արիւնափրքը,
Եւ Նաեւ սպանող դարուն
անտարբեր...:

Սակայն, փշրուած գանկի
Ու խոցոտած մարմնի
Չգացումը վիրաւոր
Գիտէ միայն այն՝
Որ ապրած է պահը,
Ժամն ու օրը մահուան,
Ամիսն ու տարին, մեղքերը հազար
Երբ խաճած է իր լեզուն
Եւ սեղմած ատամներն ակամայ
Եւ ճաշակած, Եղեռն մը մե՛ծ
Որ անցագիրն է, հայուն ակամայ...
Եւ որուն սիրտը
Հոգին ու մարմինն
Ան այսօր կ'արիւնի՝
Անսփոփ տենդով
Անմխիթար յոյսով... քանզի՞
Բաց դասագիրք է հայու հոգին
հիմա:

Կարողացէ՛ք մարդիկ,
Չարգացէ՛ք մարդիկ
Ապա դատեցէք
Ձեր խիղճերը քար
Եթէ տակաւին՝
Մարդ էք՝
Մարդու պէ՛ս:
Յակառակ տեսչիս,
Կեանքին կը նայիմ
Ես մեծ ապշութեամբ...
Կ'անխօծեմ հայու անունս տժգոյն՝
Որ գոյն տուաւ հողին
Որպէսզի կանաչնայ
Անապատը անզամ:
Առուակներու կարմիր
Կոհակները խեղճ
Անունն իմ տարին
Եօթը ցամաքամաս...
Անկամ հոգիս հիւանդ,
Տանս հայելիին

Հիցած փայլքին մէջ
Ի գուր կը փնտռէ
Իմ կորուած եսը,
Դեմքը, անունը,
Որ գոհը գնաց երեկ
Խաղին Ապրիլի
Սեւ գերանդիի
Յարուածով յիմար...:

Կը փորձեմ անճար
Գտնել իմ «Ես»-ը,
Իմ էութիւնը,
Շարժիլ սկսած՝
Իմ ինքնութիւնը՝
Որ թաղեցին երեկ
Մահուան ու կեանքի
Կռիւնի մէջ անհաւասար,
Երբ մնացի անզօր,
Երբ մնացի ես համր
Երբ մնացի միւնակ
Տարիներ երկար...:

Այսօր հրաշքով,
Այսօր հրաշքով,
Ու մեծ զարմանքով
Վիրաւոր հոգիս
Յանկարծ կը հայցէ
Նոր կեանք ու արեւ
Որ յիշէ դարձեալ
Եւ վերագտնէ
Իր հին անունը,
Կորսուած տունը՝
Որ գտնէ ջո՛ւնը...:

Մի սպաննէք, ծառերը մարդիկ...
Թոյլ տուէք նոր ծիլին՝
Որ ծաղկի՛,
Որ համբուրէ հողին ընդերքէն
Արեւն ու կեանքը...:
Զանգի ես ծիլն եմ
Այդ նոր կանաչող
Որ կ'ուզէ ապրիլ
Վերստին ծաղկիլ
Նոր յոյսով յանկարծ
Բանալ իր աչքերն,
Աշխարհին ժպտիլ...:

Բայց, հարց կու տամ այսօր
Ես աղերսագին,
Ո՞ր է շիրիմը
Կորսուած ցեղիս...:
Ուր են խաչքարերն
Միլիոն գոհերուն...:
Խունկ ու պատարագ
Ալ օգուտ ունի՞...

Մատներս անզամ
Կը վառեմ գերթ մոմ
Լուսաւորելու
Խիղճերը բոլոր
Եթէ իմանան թէ հրաշքով մը
Ճաշակելէ ետք
Այսքան դառնութիւն
Դժոխք մը անգիր՝
Կը վերադառնան
Չոհերն իմ բոլոր...:

Չեմ ուզեր հաւատալ
Սուտ կրօններու...:
Խիղճս մեռած է
Եւ ծնած օրէն...:
Աստուածներու քմահաճ
Յաւատքը գիտեմ...:
Առեւտուր է երկինքի
Կամքն ու կանոնը...:
Ալ չեմ հաւատար
Մարգարէներուն,
Սեւ դիմակներն անոնց
Կ'աւտեմ առ յաւեւ...:
Գինիով օծուած
Դիակս երեկի
Չարմացուց այսօր
Կեանքի վաճառորդ
Յարալէզներն անզամ...:
- Թէ՛ ինչո՞ւ կ'ապրիմ
Թէ՛ ինչպէ՞ս կ'ապրիմ...:
Չարմանալի չէ՞
Որ հայ կայ տակաւին
Աշխարհի երեսին
Որ կը համարձակի՞
Ժպտիլ արեւին...:

Հանելուկ է հայուն
Խաչելութիւնը,
Նաեւ՝ երկունքը,
Երբ արհամարհած
Ձարդ, մահ, կոտորած
Կ'ուզէ ան ժպտիլ
Խնդալ, ծիծաղիլ
Վերստին ծնիլ
Կրկին, կրկին ապրիլ...:
Դառնալ դժոխքի
Ճանապարհներէն,
Ան յաւեւ փակել
Դարպասն դժոխքի,
Կերտել նոր երկիր
Նոր տուն, նոր աշխարհ,
Ուժեղ երկունքով
Հրավառ կամքով
Մոռացութեան տուած
Ամէն խաչ ու մահ
Ու դառնալ պայքար...
Դառնալ նոր գարուն
Ու նոր ապագայ...:

ՀԱՍԲԻԿ ՍԱՐՏԻՐՈՍԵԱՆ